Նախագիծ

Արձանագրային

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախագծի մասին

Հավանություն տալ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով:

Գևորգ Դանիելյան

01/10.1/3222-10
2010-03-30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. 1-ին հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ միջազգային պայմանագրերի վավերացման, չեղյալ հայտարարման և կասեցման հարցերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և առաջիկա քառօրյա նիստերի օրակարգ առանց քվեարկության ընդգրկելու հարցերը կարգավորված են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-38-րդ հոդվածներով։ Ինչ վերաբերում է դրանց արտահերթ քննարկմանը, ապա դա նպատակահարմար չենք համարում, քանի որ դրանով գործընթացն անհարկի զրկվում է անհրաժեշտ ճկունությունից։

2. 2-րդ հոդվածի՝

1) 1-ին մասով առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ տվյալ մասում խոսքը միջազգային պայմանագրի կամ դրանում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը չհակասելու մասին է, իսկ նման պահանջ դրվում է միայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի վավերացման դեպքում և ոչ՝ կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու: Նման դրույթ նախատեսված չէ ո՛չ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ո՛չ էլ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

2) 2-րդ և 3-րդ մասերով առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ հայտնում ենք, որ տվյալ պարագայում խոսքը վավերացման ներկայացված միջազգային պայմանագրի կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենքների փոփոխության կամ նոր օրենքի ընդունման անհրաժեշտության մասին է: Այսինքն, նոր օրենք ընդունելու կամ Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու հարց կարող է առաջանալ միջազգային պայմանագրի վավերացման փաստով, եթե տվյալ միջազգային պայմանագրից բխող պարտավորությունները նախատեսում են այդպիսի անհրաժեշտություն, սակայն անհասկանալի է, թե արդեն իսկ գործող միջազգային պայմանագիրը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու դեպքում ինչպես պետք է առաջանա տվյալ պայմանագրում ամրագրված միջազգային պարտավորությունների հիման վրա նոր օրենք ընդունելու կամ օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Ավելին, այդ դեպքում ևս «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի նախատեսում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կասեցման կամ չեղյալ հայտարարման դեպքեր:

Նույն հիմնավորմամբ աննպատակահարմար է 5-րդ և 6-րդ մասերով առաջարկվող փոփոխությունների ընդունումը, քանի որ միջազգային պայմանագիրը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում ևս Հայաստանի Հանրապետության կառավարության տեղեկանքին համապատասխան նոր օրենք ընդունելու կամ գործող օրենքներում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն աննպատակահարմար է համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ 41096
«05» 03 2010թ.

0078 Երևան, Հալաբյան 41/ա, հեռ. 380-389
էլ. փոստ info@moj.am

Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատակազմի ղեկավար՝
Պարոն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության
2010թ. մարտի 3-ի 02/10.1/1968-10 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Սարգսյան,

Կից ներկայացնում ենք ««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Հարգանքով՝

Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

52

035-4383
05 03 10

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն
Լ.Ղալբախսյան

AJV-11-11

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Նախագծի 1-ին հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ միջազգային պայմանագրերի վավերացման, չեղյալ հայտարարման և կասեցման հարցերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգ առանց քվեարկության ընդգրկելու և արտահերթ քննարկելու կարգը զրկում է գործընթացը անհրաժեշտ ճկունությունից, առաջին հերթին պայմանագրերի վավերացման դեպքում, ուստի նման փոփոխությունը գտնում ենք աննպատակահարմար:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի 1-ին հոդվածն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող փոփոխությունը, մեր կարծիքով, ճիշտ չէ, քանի որ տվյալ մասում, խոսքը գնում է միջազգային պայմանագրի կամ դրանում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը չհակասելու մասին: Իսկ նման պահանջ դրվում է միայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի վավերացնելու դեպքում, այլ ոչ կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու: Նման դրույթ նախատեսված չէ ոչ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ոչ էլ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

3. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով կատարվող փոփոխությունների վերաբերյալ հայտնում ենք, որ տվյալ պարագայում խոսքը գնում է վավերացման ներկայացված միջազգային պայմանագրի կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենքների փոփոխության կամ նոր օրենքի ընդունման անհրաժեշտության մասին: Այսինքն, նոր օրենք ընդունելու կամ Հայաստանի Հանրապետության օրենքերում փոփոխություններ կատարելու հարց կարող է առաջանալ միջազգային պայմանագրի վավերացման փաստով, եթե տվյալ միջազգային պայմանագրից բխող պարտավորությունները նախատեսում են այդպիսի անհրաժեշտություն, սակայն անհասկանալի է, թե արդեն իսկ գործող միջազգային պայմանագիրը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու դեպքում ինչպես պետք է առաջանա տվյալ պայմանագրում ամրագրված միջազգային պարտավորությունների հիման վրա նոր օրենք ընդունելու կամ օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Ավելին, այդ դեպքում ևս «Հայաստանի Հանրապետության

դրույթներ չի նախատեսում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կասեցման կամ չեղյալ հայտարարելու դեպքերում:

Նույն նկատառումը, թերևս տեղին է նաև Օրենքի 93-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասության մեջ նախատեսվող փոփոխության պարագայում:

4. Վերոնշյալ դիտողությունները նկատի ունենալով, ըստ էության, ավելորդ է դառնում նաև նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվող փոփոխությունն առ այն, որ միջազգային պայմանագիրը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում ևս Հայաստանի Հանրապետության կառավարության տեղեկանքին համապատասխան նոր օրենք ընդունելու կամ գործող օրենքներում փոփոխություն կատարելու անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ազգային ժողով է ներկայացնում համապատասխան նախագծեր, քանի որ ինչպես վերը հիմնավորվեց, միջազգային պայմանագրի կասեցման կամ չեղյալ հայտարարելու դեպքում նոր օրենք ընդունելու կամ գործող օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

5. Ներկայացված դիտողություններն ընդունելու դեպքում վերանում է նաև նախագծի 2-րդ հոդվածի 6-րդ մասով կատարվող փոփոխության անհրաժեշտությունը, քանի որ այն կարգավորում է միաջազգային պայմանագիրը չեղյալ հայտարարելու հետ կապված հարաբերությունները:

Միաժամանակ հայտնում ենք, որ նույն մասում «հանել» բառն անհրաժեշտ է փոխարինել «ուժը կորցրած ճանաչել» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ՝ **Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ**

Իրավական ակտերի փորձաքննության
վարչության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան, Կառավարական տուն 1

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Գևորգ Դանիելյանին (հավաք)
ՀՀ ֆինանսների նախարար
պարոն Տիգրան Դավթյանին
ՀՀ արտաքին գործերի նախարար
պարոն Էդվարդ Նալբանդյանին

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ խնդրում եմ քննության առնել և ներկայացնել եզրակացություն։

Ժամկետ՝ 5 օր։

Տիկին Ամալյա Ենգոյանին
պարոն Արթուր Սարգսյանին

Ամփոփել եզրակացությունները և պատրաստել պատասխանի նախագիծ։

Ժամկետ՝ 3 օր։

CoSign Digital Signature

Դավիթ Սարգսյան

02/10.1/1968-10 2010-03-01

.....-ը .....-ի, 20..... թ. հ/հ.....

AJV-11-11

Կատարող. Պետրոս Քացախյան

Հեռ. 515731

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2010թ. փետրվարի 22
Ն – 162

52

012-3658
25-02-10

AJV-11-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

22 փետրվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկման համար գլխադասային նշանակել Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը:

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Թիվ Ը/Տ-030-Ե-19

«19» փետրվար 2010 թ.

375095, Երևան, Մ.Բաղրամյանի պող. 19
Հեռ. 588-242
Էլ. փոստ vdallaqyan@parliament.am

ՀՀ ԱԺ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՆ. Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Մեծարգո նախագահ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75 և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47 հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը:

Խնդրում եմ նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Կից ներկայացվում է նաև՝

ա) օրենքի նախագծի հիմնավորումը,
բ) այլ օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության բացակայության վերաբերյալ տեղեկանք,
գ) օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ տեղեկանք:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Նախագիծ
Պ-834-22.02.2010-ՊՐ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ազգային ժողովի կանոնակարգե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Ազգային Ժողովի կանոնակարգե Հայաստանի Հանրապետության (2002 թվականի փետրվարի 20-ի, ՀՕ-308) օրենքի (այսուհետ՝ օրենք) 54-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով «5. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու հարցերը առանց քվեարկության ընդգրկվում են հերթական նստաշրջանի եւ առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում եւ քննարկվում են արտահերթ։ Ազգային Ժողովի նախագահը միջազգային պայմանագրերը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում դրանք ուղարկում է համապատասխան գլխադասային հանձնաժողով, որը միջազգային պայմանագրերի վերաբերյալ իր եզրակացությունն Ազգային Ժողովի նախագահին է ներկայացնում հերթական նստաշրջանի առաջիկա չորսօրյա նիստերից առնվազն 2 ժամ առաջ։ Անկախ համապատասխան գլխադասային հանձնաժողովի եզրակացությունից միջազգային պայմանագիրը չորսօրյա նիստերում քննարկվում է արտահերթե։

Հոդված 2. Օրենքի 93-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «վավերացմանն է ներկայացվումե բառերը փոխարինել «վավերացմանը, կասեցմանը կամ չեղյալ հայտարարելուն է ներկայացվումե բառերով,

2) 3-րդ մասի առաջին նախադասության «Եթե վավերացման ներկայացվածե բառերը փոխարինել «Եթե վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասինե բառերով,

3) 3-րդ մասի երկրորդ նախադասության «Եթե վավերացման ներկայացվածե բառերը փոխարինել «Եթե վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասինե բառերով,

4) 4-րդ մասի առաջին նախադասության «կասեցման մասին որոշման նախագիծը քննարկվում էե բառերը փոխարինել «կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասին հարցերը քննարկվում ենե բառերով,

5) 7-րդ մասի «պայմանագիրը վավերացնելու մասին եւե բառերը փոխարինել «պայմանագիրը վավերացնելու, կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու մասին եւե բառերով,

6) 8-րդ մասը հանել։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՕՐԻՆԱԳԾԻ

Օրինագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու ընթացակարգը հստակ կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՕՐԻՆԱԳԾԻ

Սույն օրենքի ընդունման կապակցությամբ այլ օրենքներ ընդունելու, կամ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հոդված 54. Հերթական նստաշրջանի և չորսօրյա նիստերի օրակարգերում նախագծերի ընդգրկման ժամկետները

1. Եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը հերթական նստաշրջանի օրակարգի նախագիծ է ընդգրկվում գլխադասային հանձնաժողովի եզրակացությամբ, սակայն ոչ ուշ, քան շրջանառության մեջ դրվելուց հետո 30-օրյա, իսկ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին, ինչպես նաև հանրաքվեի դրվելիք օրենքների նախագծերը՝ 40-օրյա ժամկետում:

2. Պատգամավորի առաջադրած օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվում է գլխադասային հանձնաժողովի եզրակացությամբ, սակայն ոչ ուշ, քան հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվելուց 60 օր հետո, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ Ազգային ժողովի որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:

2¹. Եթե սույն հոդածի 1-ին և 2-րդ կետերում սահմանված ժամկետները լրանում են մինչև չորսօրյա նիստերի երկուշաբթի օրը, ապա հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծում օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդգրկվելու ժամկետը համարվում է սպառված առաջիկա չորսօրյա նիստերի առաջին նիստից 2 ժամ առաջ:

3. Կառավարության առաջադրած օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվում է գլխադասային հանձնաժողովի եզրակացությամբ:

4. Հերթական նստաշրջանի կամ չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի ընդգրկումը կարող է հետաձգվել գլխադասային հանձնաժողովի եզրակացությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ:

«5. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու հարցերը առանց քվեարկության ընդգրկվում են հերթական նստաշրջանի եւ առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում եւ քննարկվում են արտահերթ։ Ազգային Ժողովի նախագահը միջազգային պայմանագրերը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում դրանք ուղարկում է համապատասխան գլխադասային հանձնաժողով, որը միջազգային պայմանագրերի վերաբերյալ իր եզրակացությունն Ազգային Ժողովի նախագահին է ներկայացնում հերթական նստաշրջանի առաջիկա չորսօրյա նիստերից առնվազն 2 ժամ առաջ։ Անկախ համապատասխան գլխադասային հանձնաժողովի եզրակացությունից միջազգային պայմանագիրը չորսօրյա նիստերում քննարկվում է արտահերթե։

(Վերնագիրը փոփ. 24.12.04 ՀՕ-69-Ն)
(54-րդ հոդվածը փոփ., լրաց. 24.12.04 ՀՕ-69-Ն, փոփ. 26.02.07 ՀՕ-111-Ն)

Հոդված 93. Միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասին որոշումների ընդունման կարգը

1. Միջազգային պայմանագիրն Ազգային ժողովի ~~վավերացմանն է ներկայացվում~~ վավերացմանը, կասեցմանը կամ չեղյալ հայտարարելուն է ներկայացվում, եթե դա կամ դրանում ամրագրված պարտավորությունները սահմանադրական դատարանի որոշմամբ չեն հակասում Սահմանադրությանը։

2. Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային պայմանագրերի շրջանակը սահմանվում է Սահմանադրությամբ և օրենքով։

3. ~~Եթե վավերացման ներկայացված~~ Եթե վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասին միջազգային պայմանագրի կիրառումը նախատեսում է Հայաստանի Հանրապետության օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, ապա կառավարությունը պայմանագրին կից ներկայացնում է տեղեկանք այդ մասին։

~~Եթե վավերացման ներկայացված~~ Եթե վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասին միջազգային պայմանագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության օրենքներին հակասող նորմեր, ապա կառավարությունը պայմանագրին կից ներկայացնում է տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության կամ աննպատակահարմարության մասին։

4. Ազգային ժողովում միջազգային պայմանագրերի վավերացման, ~~կասեցման մասին որոշման նախագիծը քննարկվում է~~ կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասին հարցերը քննարկվում են սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով։ Հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս Հանրապետության Նախագահի ներկայացուցիչը։

5. Միջազգային պայմանագիրը կարող է վավերացման ներկայացվել նաև հիմնական զեկուցողի կողմից սահմանված վերապահումներով։

6. Սույն հոդվածով սահմանված կարգը տարածվում է նաև միջազգային պայմանագրերին Հայաստանի Հանրապետության միանալու մասին որոշում ընդունելու վրա։

7. Եթե որոշում է ընդունվում միջազգային ~~պայմանագիրը վավերացնելու մասին և,~~ պայմանագիրը վավերացնելու, կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու մասին եւ համաձայն կառավարության տեղեկանքի (տեղեկանքների), համապատասխան պայմանագրից բխում է, որ պետք է ընդունվի նոր օրենք, կամ փոփոխություններ կատարվեն գործող օրենքում, ապա

կառավարությունը «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում համապատասխան օրենքում փոփոխություններ կատարելու կամ նոր օրենք ընդունելու մասին նախագիծը (նախագծերը)։

~~8. Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագիրը կամ այն միջազգային պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին որոշման նախագիծը, որին միանալու որոշումն ընդունել է Ազգային ժողովը, կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվում չեղյալ հայտարարելը հիմնավորող տեղեկանքով։~~

~~Միջազգային պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին որոշման նախագծի ներկայացման և քննարկման նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 4-րդ կետի կանոնները։~~

(Վերնագիրը խմբ. 22.02.07 ՀՕ-124-Ն, լրաց. 26.02.07 ՀՕ-111-Ն)

(93-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 22.02.07 ՀՕ-124-Ն, լրաց., փոփ. 26.02.07 ՀՕ-111-Ն)

Հոդված 36. Հերթական նստաշրջանի օրակարգի նախագիծը

1. Հերթական նստաշրջանի օրակարգի նախագծում ընդգրկվում են սահմանված կարգով շրջանառության մեջ դրված օրենքների նախագծերը կամ նախագծերի փաթեթները, Ազգային ժողովի որոշումների նախագծերը և օրենքով նախատեսված այլ հարցեր։

2. Հերթական նստաշրջանի օրակարգի, ինչպես նաև դրանում լրացումներ կատարելու մասին նախագծերը կազմված են երեք մասից՝

ա) հարցեր, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը ներկայացրել է դրական եզրակացություն.

բ) հարցեր, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը դրական եզրակացություն չի ներկայացրել.

գ) պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր։

3. Պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցերն են՝

ա) Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված քննարկման ժամկետ ունեցող հարցերը.

բ) Հանրապետության Նախագահի հրաժարականի մասին հարցը.

գ) Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին հարցը.

դ) Հանրապետության Նախագահի առարկություններով և առաջարկություններով վերադարձված օրենքները քննարկելու մասին հարցերը.

ե) համաներում հայտարարելու մասին Հանրապետության Նախագահի առաջարկությունը.

զ) Ազգային ժողովի որոշմամբ քննարկման ժամկետ ունեցող հարցերը.

է) նախորդ հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերը.

ը) պատգամավորին ձերբակալելու, որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու մասին համաձայնություն տալու վերաբերյալ հարցը.

թ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու հարցերը.

ժ) Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների և մշտական հանձնաժողովների նախագահների թափուր պաշտոններում ընտրությունների անցկացման մասին հարցերը.

ժա) Սահմանադրության 83, 83[1], 83[2], 83[3], 83[4], 103-րդ հոդվածներով և օրենքով նախատեսված դեպքերում պաշտոններում ընտրությունների, նշանակումների, լիազորությունների դադարեցման (պաշտոնանկ անելու) մասին հարցերը։

ժբ) հարցապնդումների քննարկման մասին հարցերը։

ժգ) սույն օրենքի 104[2] -րդ հոդվածով սահմանված կարգով ընդդիմադիր խմբակցությունների կողմից արտահերթ համարված հարցերը։

(36-րդ հոդվածը խմբ., լրաց., փոփ. 26.02.07 ՀՕ-111-Ն, լրաց. 23.11.08 ՀՕ-182-Ն)

Հոդված 37. Չորսօրյա նիստերի օրակարգի նախագիծը

1. Չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում կարող են ընդգրկվել միայն հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերը։

2. Չորսօրյա նիստերի օրակարգի նախագիծը կազմված է երեք մասից՝

ա) հարցեր, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը ներկայացրել է դրական եզրակացություն.

բ) հարցեր, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը դրական եզրակացություն չի ներկայացրել.

գ) պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր։

3. Չորսօրյա նիստերի օրակարգում պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցերն են՝

ա) սույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետում թվարկված հարցերը, բացառությամբ «էե ենթակետում նշվածի.

բ) նախորդ չորսօրյա նիստերում անավարտ մնացած հարցերը.

գ) նախորդ չորսօրյա նիստերի օրակարգում ընդգրկված, սակայն չքննարկված հարցերը.

դ) ***(ենթակետն ուժը կորցրել է 30.04.09 ՀՕ-113-Ն)***

ե) ***(ենթակետն ուժը կորցրել է 30.04.09 ՀՕ-113-Ն)***

զ) ***(ենթակետն ուժը կորցրել է 30.04.09 ՀՕ-113-Ն)***

(Վերնագիրը փոփ. 24.12.04 ՀՕ-69-Ն)

(37-րդ հոդվածը փոփ. 24.12.04 ՀՕ-69-Ն, փոփ. 30.04.09 ՀՕ-113-Ն)

Հոդված 38. Հերթական նստաշրջանի և չորսօրյա նիստերի օրակարգերի քննարկման կարգը

1. Հերթական նստաշրջանի առաջին նիստն սկսվում է նստաշրջանի և ընթացիկ չորսօրյա նիստերի օրակարգերը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագծերի քննարկմամբ։

2. Չորսօրյա նիստերն սկսվում են հերթական նստաշրջանի օրակարգում լրացումներ կատարելու, ինչպես նաև ընթացիկ չորսօրյա նիստերի օրակարգը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագծերի քննարկմամբ։

3. Հերթական նստաշրջանի օրակարգը հաստատելու, դրանում լրացումներ կատարելու և չորսօրյա նիստերի օրակարգը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագծերը քննարկվում են առանձին-առանձին։

4. Հերթական նստաշրջանի օրակարգի, դրանում լրացումներ կատարելու և չորսօրյա նիստերի օրակարգի նախագծերը ներկայացնելու համար Ազգային ժողովի նախագահին հատկացվում է 20-ական րոպե։

5. Հարցերը տրվում են սույն օրենքի 57-րդ հոդվածով սահմանված կարգով։

6. Մտքերի փոխանակությունը տեղի է ունենում սույն օրենքի 58-րդ հոդվածով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝

ա) ելույթ ունեցողը, բացառությամբ օրակարգի նախագծում ընդգրկված հարցի մեկ հեղինակի, հանդես է գալիս խոսափողից՝ երկու րոպեի ընթացքում.

բ) խմբակցությունների, պատգամավորական խմբերի ներկայացուցիչներին ելույթի համար հատկացվում է մինչև երկու րոպե.

գ) ***(ենթակետն ուժը կորցրել է 24.12.04 ՀՕ-69-Ն)***

7. ***(7-րդ կետն ուժը կորցրել է 24.12.04 ՀՕ-69-Ն)***

8. Հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծի քննարկումն ավարտվում է Ազգային ժողովի նախագահի՝ մինչև 5 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով, որտեղ նա, ելնելով քննարկման արդյունքներից, իր հայեցողությամբ միասնական քվեարկության է դնում՝

ա) հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծում հարցերի, կամ դրանց մի մասի ընդգրկումը հետաձգելու մասին հարցը, որի ընդունվելու դեպքում մնացած, իսկ չընդունվելու դեպքում՝ հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծում բոլոր հարցերի ընդգրկումը հետաձգելու մասին հարցերը քվեարկվում են առանձին-առանձին։

Եթե հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծում օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի ընդգրկումը հետաձգելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծն ընդգրկվում է հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծի երկրորդ մասում.

բ) հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծի առաջին մասում ընդգրկված հարցերը կամ դրանց մի մասը հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկելու մասին հարցը, որի ընդունվելու դեպքում հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծի առաջին մասի մնացած և երկրորդ մասի բոլոր, իսկ չընդունվելու դեպքում նախագծի առաջին և երկրորդ մասերի բոլոր հարցերը քվեարկվում են առանձին-առանձին։

Եթե հերթական նստաշրջանի օրակարգում օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը ընդգրկելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը հանվում է շրջանառությունից։

9. Չորսօրյա նիստերի օրակարգի նախագծի քննարկումն ավարտվում է Ազգային ժողովի նախագահի՝ մինչև 5 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով, որտեղ նա, ելնելով քննարկման արդյունքներից, իր հայեցողությամբ միասնական քվեարկության է դնում՝

ա) չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում հարցերի կամ դրանց մի մասի ընդգրկումը հետաձգելու մասին հարցը, որի ընդունվելու դեպքում մնացած, իսկ չընդունվելու դեպքում չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում բոլոր հարցերի ընդգրկումը հետաձգելու մասին հարցերը քվեարկվում են առանձին-առանձին։

Եթե չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի ընդգրկումը հետաձգելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը ընդգրկվում է չորսօրյա նիստերի օրակարգի նախագծի երկրորդ մասում.

բ) չորսօրյա նիստերի օրակարգի նախագծի առաջին մասում ընդգրկված հարցերը կամ դրանց մի մասը չորսօրյա նիստերի օրակարգում ընդգրկելու մասին հարցը, որի ընդունվելու դեպքում չորսօրյա նիստերի օրակարգի նախագծի առաջին մասի մնացած և երկրորդ մասի բոլոր, իսկ չընդունվելու դեպքում նախագծի առաջին և երկրորդ մասերի բոլոր հարցերը քվեարկվում են առանձին-առանձին։

Եթե չորսօրյա նիստերի օրակարգում օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը ընդգրկելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը հանվում է շրջանառությունից։

10. Սույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետում թվարկված հարցերը հերթական նստաշրջանի, իսկ սույն օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետում թվարկված հարցերը՝ չորսօրյա նիստերի օրակարգում ընդգրկվում են առանց քվեարկության, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ։

11. ***(11-րդ կետն ուժը կորցրել է 26.02.07 ՀՕ-111-Ն)***

12. Չորսօրյա նիստերի առաջին նիստից առնվազն 2 ժամ առաջ Աշխատակազմն Ազգային ժողովի նիստերի դահլիճում պատգամավորներին է տրամադրում համապատասխան օրակարգերի, դրանցում լրացումներ կատարելու նախագծերը, ինչպես նաև դրանցում ընդգրկված հարցերի նախագծերը։

(Վերնագիրը փոփ. 24.12.04 ՀՕ-69-Ն)

(38-րդ հոդվածը փոփ., խմբ. 24.12.04 ՀՕ-69-Ն, 26.02.07 ՀՕ-111-Ն)